ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЗДРАВОХРАНЕНИЯ РА
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA

Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ անվան
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

АОЗТ НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ОНКОЛОГИИ им. В. А. ФАНАРДЖЯНА

CJSC NATIONAL CENTER OF ONCOLOGY named after V. A. FANARJIAN

ՈՒԱԿ NCO

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ, ՖԱՆԱՐՋՅԱՆ Փ.76

ЕРЕВАН, КАНАКЕР, ул. ФАНАРДЖЯНА, 76

76 FANARJIAN str., YEREVAN, KANAKER, ARMENIA

№ 961
«05» 09 2024

Հեռ. (+374 10) 20-94-02

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ի տնօրեն
Լիլիթ Փնջոյանին

Ծանուցում

Հարգելի՛ տիկին Փնջոյան,

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Աննարկա» ՍՊԸ-ի միջև 22.12.2023թ կնքվել է ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-19 ծածկագրով բժշկական նշանակության ապրանքների և 11.06.2024թ-ին ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/67-8 ծածկագրով համակարգչային սարքավորումների մատակարարման պայմանագրեր:

Հիմք ընդունելով ՀՀ Ֆինանսների նախարարության թիվ 03/26-1/17361-2024 գրությունը /կցվում է/, համաձայն որի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06/05/2023թ. մինչև 20/06/2025թ.) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները: Ինչպես նաև առաջնորդվելով կնքված պայմանագրի 8.3 կետով, այն է "*Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:*"

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-19 և ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/67-8 ծածկագրերով պայմանագրերը՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության "*Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը . . .*"

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվում է պայմանագրերը միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի 1570060023050100 հաշվեհամարին վճարել ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-19 ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովման՝ 36000 /երեսունվեց հազար/ ՀՀ դրամ, պայմանագրի կատարման ապահովման՝ 24000 /քսանչորս հազար/ ՀՀ դրամ, ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/67-8 ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովման՝ 105000 /մեկ հարյուր հինգ հազար/ ՀՀ դրամ, պայմանագրի կատարման ապահովման՝ 70000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին՝ «Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը սկսելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ՝ ՆԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների բաժնի ղեկավար
Հեռ. /010/ 20 50 50 /1-02/